ԿԱՐԾԻՔ

Ռուզաննա Էդուարդի Բաղրամյանի՝
«Սկզբունքային բանակցությունների լեզվագործաբանական կաղապարը (Հարվարդի բանակցային նախագիծ)» թեմայով

Ժ. 02.07. - «Ռոմանագերմանական լեզուներ»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Գրախոսվող ատենախոսությունը նվիրված է գործարար բանակցությունների ընթացքում կիրառվող դիսկուրսի լեզվագործաբանական հայեցակերպի քննությանը՝ սկզբունքային բանակցությունների ռազմավարության թիրախավորմամբ: Համոզման խոսքը որպես խոսքային ռազմավարության միջոց ընտրելը բանակցային հաղորդակցման հենասյունն է՝ անկախ շահից և հասարակական դիրքից: Սկզբունքային բանակցություններում գործածվող գործարար դիսկուրսի հենքային կաղապարը կազմող խոսքային ակտերը, հեջերը, լեզվառճական տարատեսակ հնարները ձևավորում են մտավոր կաղապարներ, որոնք էլ իրենց հերթին հիմք են դառնում սկզբունքային բանակցությունների հիմնարար արժեքների ձևավորման համար: Անդրադառնալով ատենախոսությանը՝ միանգամից նշենք, որ աշխատանքը յուրօրինակ է թե՛ արդիական թեմայի ընտրության, թե՛ դրա զարգացման առումով:

Ատենախոսության ներածությունը և երկու ծավալուն գլուխները բաղկացած են տրամաբանական ենթաբաժիններից, որոնք միմյանց լրացնելով՝ ամբողջացնում են քննության առարկայի նկարագրությունը: Այսպես, առաջին գլուխը ներկայացնում է հենքային գիտելիք գործարար բանակցությունների հիմնական հասկացությունների պատմության և զարգացման վերաբերյալ: Երկրորդ գլուխը կենտրոնանում է սկզբունքային բանակցությունների լեզվագործաբանական կաղապարի ձևավորման վրա: Աշխատանքի եզրակացությունն ամփոփում է թե՛ տեսական հիմնահարցերը, և թե՛ գործնական վերլուծությունները:

Հարկ է նշել, որ ատենախոսության առավել ուշագրավ հատվածներից է առաջին գլխի երրորդ ենթակետը, որում հեղինակը դիտարկում է մտավոր կաղապարները որպես դիսկուրսի բովանդակային մակարդակի ընկալման կարևոր գործոն: Գործնական առումով արժեքավոր են նաև երկրորդ գլխի ենթակետերը՝ հեջավորման և լեզվառճական հնարների մանրամասն ուսումնասիրության առումով: Ատենախոսական նյութերը կարող են գործածվել ապագա բանասերների, գործարար ոլորտի մասնագետների վերապատրաստման գործընթացում: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել խոսքային ներգործման հիմնախնդիրներին վերաբերող հատուկ և տեսական դասընթացներ կարդալիս, կուրսային և դիպլոմային աշխատանքներ գրելիս:

Բարձր գնահատելով կատարած հսկայածավալ աշխատանքը, այնուամենայնիվ, կցանկանայի անդրադառնալ մի քանի հարցերի և դիտարկումների.

1. Ատենախոսության մեջ նշվում է սահմանակարգային դիսկուրսի տեսակների մասին, որոնց թվում է գործարար դիսկուրսը: Ըստ Շվեյցերի՝ առանձնացվում են գործարար դիսկուրսի երեք հիմնական տեսակներ. նկարագրական, քննադատական և ճանաչողական: Արդյո՞ք տվյալ դեպքում քննության է առնվել միայն ճանաչողական տեսակը, որը ենթադրում է հասկացությունների և կաղապարների վերլուծություն, որովհետև այն թիրախային է և առավել հաճախ հանդիպող, թե՞ կա նաև այլ պատճառաբանություն: Այս դիտանկյան հաշվառումը կարող է առավել հստակեցնել ֆիլմերից վերցված հատվածների խորքային վերլուծությունը:
2. Եզրակացության մեջ ատենախոսը անդրադառնում է մտավոր կաղապարների և գաղափարախոսության դերին սկզբունքային բանակցություններում: Նշվում է, որ դիսկուրսը, լինելով մտավոր կաղապարի վերարտադրություն, ինքնին կարող է նպաստել նոր մտավոր կաղապարների ձևավորմանը և փոփոխել բանակցության ընթացքը: Բայց արդյո՞ք այստեղ խոսքը վերաբերում է ֆիլմի հեղինակի, սցենարիստի մտավոր կաղապարներին, եվ եթե այո, ապա որքանո՞վ է հիմնավորվում դրա հիմքով բանակցային գործընթացի բնականոն փոփոխության օբյեկտիվությունը: Չէ՞ որ, մտավոր կաղապարները տվյալ պարագայում կարող են նաև բնութագրվել որպես շինծու և մանիպուլատիվ:

3. Ընդհանրապես, կինոմատոգրաֆիան զանգվածային հաղորդակցության ազդեցիկ միջոցներից է: Այն բազմաշերտ նշանագիտական երևույթ լինելով՝ իր լեզվառճական, լեզվամշակութային և այլ առանձնահատկություններով ձևավորում է այն, ինչ այսօր կոչվում է Film Discourse /գեղարվեստական դիսկուրս/, հավանաբար զանգվածային հաղորդակցության տեսանկյունից տվյալ հարցին անդրադարձը նույնպես կարևոր է:

Ընդհանրացնելով, նշենք, որ աշխատանքը կատարվել է պատշաճ կերպով: Բոլոր թեզերն ուղեկցվում են համապատասխան օրինակներով: Ատենախոսության նպատակը, խնդիրները, նորույթն ու արդիականությունը հստակ ձևակերպված են և հիմնավորված, եզրակացությունը՝ տրամաբանված և ընդգրկուն:

Ամփոփելով՝ կարելի է նշել, որ աշխատանքը վստահաբար ունի մի շարք արժանիքներ, որոնք վկայում են հեղինակի դիտողականության, վերլուծական մտածողության, ինչպես նաև բազմաշերտ վերլուծություն կատարելու կարողության մասին:

Ռուզաննա Էդուարդի Բաղրամյանի **«Սկզբունքային բանակցությունների լեզվագործաբանական կաղապարը (Հարվարդի բանակցային նախագիծ)» թեմայով** թեմայով ատենախոսությունը միանշանակ հաջողված է: Այն բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջները և ունի գիտահետազոտական արժեք: Ուստի վստահաբար կարող է ներկայացվել հրապարակային պաշտպանության:

բ.գ.թ. դոցենտ, Ռ. Ս. Առաքելյան

Հաստատում եմ բ.գ.թ. դոցենտ Ռ. Ս. Առաքելյանի ստորագրությունը

ԵՊՀ գիտքարտուղար՝ Ս. Հովհաննիսյան

22.05.24թ.